Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 10-ի N 972 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ ԿՆՔՎԱԾ N ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի փետրվարի 27-ին կնքված N ԱԳՆ-ՇՀԱՇՁԲ-17/4-5 գնման պայմանագրի N 1 հավելվածով սահմանված առաջին չափաբաժնի՝ պաշտպանված ձևաթղթի տեխնիկական բնութագիրը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից հաստատված և 2015 թվականի օգոստոսի 1-ից պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող պաշտպանված ձևաթղթի նմուշին՝ տեխնիկական բնութագիրը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«**1. Պաշտպանված թուղթ՝** ջրանշանով թուղթ 95 գ՝ պատված տեսանելի կարմիր, կանաչ մանրաթելերով և անտեսանելի կանաչ, կապույտ մանրաթելերով, որոնք տեսանելի են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:

2. Իրիս տպագրություն՝ գույնից գույն սահուն անցում:

3. Պաշտպանված հետնապատկեր՝ մանրագծերով կառուցված հետնապատկեր:

4. Գիլյոշիրային էլեմենտ՝ չընդհատվող գծերից բաղկացած գծանկար, որը տեսանելի է միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:

5. Միկրոգրություն՝ տեսանելի է դառնում խոշորացման դեպքում:

6. Հատուկ ներկով պատկեր OVI՝ այս ներկով տպված օբյեկտը տարբեր անկյունների տակ դիտվում է երկու տարբեր գույներով:

7. Դաջվածք՝ մանրագծերով դաջվածք (Հայաստանի Հանրապետության զինանշանը):

8. Անհատական համարակալում և կոդ՝ յուրաքանչյուր ձևաթուղթ ունի իր անհատական համարը, որն ուլտրամանուշակագույն լույսի ներքո փոխում է գույնը:

9. Ուլտրամանուշակագույն ներկ՝ այս ներկով տպված օբյեկտներն անտեսանելի են և տեսանելի են դառնում միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ